

գույքի արժեքը, ինչպես նաև պատասխանողից հոգուտ իրեն բռնագանձել նախապես վճարված 55.900 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը 2011թ. հունվարի 21-ի վճռով հայցը բավարարել է մասնակիորեն.

Ընկերությանը պարտավորեցրել է Լ. Սարգսյանին վերադարձնել SU 320/10-04 կվ հզորության 12112 համարի 1.200.000 ՀՀ դրամ արժողության մեկ հատ տրանսֆորմատորը, 300.000 ՀՀ դրամ արժողության մեկ հատ հողի փորման մեխանիզմ՝ իր պահեստամասերով, 595.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության S-82 N24010003015U համարի շարժիչի մեկ կոմպլեկտը, «S-130» տեսակի «Բլոկ պուսկաչի» մեկ կոմպլեկտը, «S-130» տեսակի փոխանցման տուփի մեկ կոմպլեկտը, «S-130» տեսակի մեկ շարժիչի վալը, իսկ գույքի բացակայության դեպքում՝ «Էլեկտրոմոնտաժ» ՓԲ ընկերությունից հոգուտ Լ. Սարգսյանի գանձել 2.095.000 ՀՀ դրամ:

SU 25/10-04 առանց համարի 700.000 ՀՀ դրամ արժողության մեկ հատ տրանսֆորմատորի մասով գործի վարույթը կարճել է՝ հայցից հայցվորի հրաժարվելու հիմքով:

Ընկերությունից հոգուտ Լ. Սարգսյանի գանձել է 41.900 ՀՀ դրամ՝ որպես վճարված պետական տուրքի գումար:

Լ.Սարգսյանից հոգուտ Ընկերության գանձել է 14.700 ՀՀ դրամ՝ որպես փորձաքննության կատարման ծախս:

Ընկերությունից հոգուտ ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ գանձել 58.800 ՀՀ դրամ՝ որպես փորձաքննության կատարման ծախս:

ԼՂՀ վերաքննիչ դատարանը պատասխանողի ներկայացուցիչ Ա.Թարխանյանի վերաքննիչ բողոքի հիման վրա վերանայելով գործի նյութերը, 2011թ. մարտի 21-ի որոշմամբ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2011թ. հունվարի 21-ի վճիռը թողել է օրինական ուժի մեջ:

Նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել պատասխանողի ներկայացուցիչ Ա. Թարխանյանը:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածը, ինչի արդյունքում սխալ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի երկրորդ մասը, 274-րդ և 470-րդ հոդվածները:

Բողոք բերողը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը գործում առկա առուվաճառքի պայմանագրերով, հանձնման-ընդունման ակտերով, հայցվորի և վկաների ցուցմունքներով հաստատված է համարում, որ Լ.Սարգսյանը սեփականության իրավունքով ձեռք է բերել վիճելի գույքը, որը պահվել էր Ընկերության պահեստում: Դատարանը գտել է, որ առուվաճառքի պայմանագրերի և հանձնման-ընդունման ակտերի ժամկետային առումով ոչ պատշաճ ձևակերպված լինելու հանգամանքը չի բացառում վեճի առարկա հանդիսացող գույքի՝ Լ.Սարգսյանի կողմից այն ձեռք բերելու փաստը: Դատարանը չի պարզել, արդյոք վեճի առարկա հանդիսացող գույքը իրականում հանդիսանում էր «վաճառող» կողմի սեփականությունը: Հայցվորն այդ փաստը հիմնավորող ապացույց չի ներկայացրել, իսկ Դատարանը դրան որևէ գնահատական չի տվել:

Դատարանը նշել է նաև, որ պատասխանող կողմը ոչ մի ապացույց չի ներկայացրել այն մասին, որ վեճի առարկա հանդիսացող գույքն ընդգրկված է Ընկերության հաշվեկշռում:

Այդ մասով բողոք բերողը նշում է, որ «Տ» մակնիշի տրակտորի շարժիչ գոյություն չունի, բոլոր շարժիչների մակնիշներն են՝ «Դ»: Հանձնման-ընդունման ակտում նշված շարժիչի համարը՝ 24010003015 A չի համապատասխանում Ընկերության պահեստում պահվող շարժիչի համարին:

Ընկերության պահեստում պահվում է ՄՏՁ ՄՄՁ 240-1002015 Ա3 մակնիշի տրակտորի շարժիչ, որն օգտագործվում է միայն ՄՏՁ մակնիշի տրակտորների համար: Ընկերության հաշվեկշռում մինչև 2006թ. հաշվառված էր ՄՏՁ-82 մակնիշի տրակտոր և տվյալ շարժիչը դրանն էր: 2006թ. ապրիլի 26-ին նշված տրակտորը դուրս է բերվել Ընկերության հաշվեկշռից և ըստ համապատասխան ակտի, այդ շարժիչը պիտանի չէր շահագործման և վերականգնման: Նույն ակտի համաձայն տրակտորը որպես երկաթեղեն մուտքագրված էր Ընկերության հաշվեկշռում, ակտի մեջ նաև առանձին նշված են պահեստամասերը: Տրակտորի քաշը 3.9 տոննա է, դրանից 1 տոննան դուրս է գրվել որպես երկաթեղեն, իսկ շարժիչը և մնացած պահեստամասերը գտնվում են Ընկերության պահեստում, սակայն մուտքագրված չեն: Նշված պահեստամասերը չեն մուտքագրվել Ընկերության հաշվեկշռում, և դա տեղի է ունեցել հայցվորի՝ Ընկերության տնօրենի պաշտոնավարման ժամանակահատվածում:

Բողոք բերողը փաստում է, որ բոլոր պահեստամասերն էլ ունեն տեխնիկական տվյալներ, որոնց մասին առուվաճառքի պայմանագրերում որևէ նշում չկա:

Սույն գործով նշանակված փաստաթղթաբանական փորձաքննության Հմ՝ 10-2718 եզրակացության համաձայն՝ 2007թ. նոյեմբերի 6-ին, 2007թ. նոյեմբերի 13-ին և 2008թ. դեկտեմբերի 25-ին ձևակերպված առուվաճառքի պայմանագրերում և ապրանքի հանձնման-ընդունման ակտերում առկա գրառումների և ստորագրությունների կատարման վաղեմությունը կազմում է մեկ տարի գումարած հանած երեք ամիս:

Դատարանը որոշման հիմքում է դրել միայն հայցվորի և վկաների ցուցմունքները, իսկ պատասխանողի ցուցմունքները լրիվությամբ անտեսել է:

Բողոք բերած անձը փաստարկել է նաև, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ ԼՂՀ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և ստորադաս դատարանի կողմից թույլ է տրվել առերևույթ դատական սխալ, որն առաջացրել է ծանր հանգամանքներ:

Խնդրում է ամբողջությամբ բավարարել վճռաբեկ բողոքը, բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի՝ 2011թ. մարտի 21-ի որոշումը և ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի թիվ 1014/02/2010թ. քաղաքացիական գործով 2011թ. հունվարի 21-ի վճիռը բեկանել մասնակի և մերժել հայցը՝ ՏՄ 320/10-04 կվ հզորության 12112 համարի 1.200.000 ՀՀ դրամ արժողության մեկ հատ տրանսֆորմատորը, 300.000 ՀՀ դրամ արժողության մեկ հատ փորման մեխանիզմն՝ իր պահեստամասերով, 595.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության S-82 N24010003015U համարի շարժիչի մեկ կոմպլեկտը, «S-130» տեսակի «Բլոկ պուսկաչի» մեկ կոմպլեկտը, «S-130» տեսակի մեկ շարժիչի վալը, (ընդհանուրը 2.095.000 ՀՀ դրամ արժողությամբ գույքը) վերադարձնելու մասով:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Լ.Սարգսյանը հանդիսանում է «Էլեկտրոմոնտաժ» ՓԲԸ բաժնետոմսերի 29 տոկոսի սեփականատեր:

2. Ըստ 2007թ. նոյեմբերի 6-ին Գ.Սարգսյանի և Լ.Սարգսյանի միջև կնքված առուվաճառքի պայմանագրի՝ Գ. Սարգսյանը 300.000 ՀՀ դրամով Լ.Սարգսյանին է վաճառել հողի փորման մեխանիզմ՝ իր պահեստային մասերով, որն էլ համաձայն 2007թ. նոյեմբերի 6-

ին Գորիս քաղաքում ձևակերպված հանձնման-ընդունման ակտի Գ.Սարգսյանը հանձնել, իսկ Լ.Սարգսյանն ընդունել է:

3. Ըստ 2007թ. նոյեմբերի 13-ին Ստեփանակերտ քաղաքում Ռ.Առստամյանի և Լ.Սարգսյանի միջև կնքված առուվաճառքի պայմանագրի՝ Ռ.Առստամյանը 1.200.000 ՀՀ դրամով վաճառել, իսկ Լ.Սարգսյանը գնել է SU 320/10-04 կվ N12112 տրանսֆորմատորը, որն էլ նույն օրը Ստեփանակերտ քաղաքում ձևակերպված հանձնման-ընդունման ակտի համաձայն Ռ.Առստամյանը հանձնել, իսկ Լ.Սարգսյանն ընդունել է:

4. Ըստ 2008թ. դեկտեմբերի 25-ին Ստեփանակերտ քաղաքում Ռ.Անդրյանի և Լ.Սարգսյանի միջև կնքված առուվաճառքի պայմանագրի՝ Ռ.Անդրյանը 595.000 ՀՀ դրամով վաճառել, իսկ Լ.Սարգսյանը գնել է S-82 N24010003015U համարի շարժիչի մեկ կոմպլեկտը, «S-130» տեսակի «Բլոկ պուսկաչի» մեկ կոմպլեկտը, «S-130» տեսակի փոխանցման տուփի մեկ կոմպլեկտը, «S-130» տեսակի մեկ շարժիչի վալը: Նշված ապրանքը 2008թ. դեկտեմբերի 25-ին Ստեփանակերտ քաղաքում կազմված հանձնման-ընդունման ակտի համաձայն Ռ.Անդրյանը հանձնել, իսկ Լ.Սարգսյանն ընդունել է:

5. Սույն գործով նշանակված փաստաթղթաբանական փորձաքննության Հմ` 10-2718 եզրակացության համաձայն` 2007թ. նոյեմբերի 6-ին, 2007թ. նոյեմբերի 13-ին և 2008թ. դեկտեմբերի 25-ին ձևակերպված առուվաճառքի պայմանագրերում և ապրանքների հանձնման-ընդունման ակտերում առկա գրառումների և ստորագրությունների կատարման վաղեմությունը կազմում է մեկ տարի գումարած կամ հանած երեք ամիս:

6. SU 25/10-04 առանց համարի 700.000 ՀՀ դրամ արժողության մեկ հաս տրանսֆորմատորի մասով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2011թ. հունվարի 21-ի վճռով կարճել է գործի վարույթը՝ հայցվորի հայցից հրաժարվելու հիմքով: Այդ մասով դատական ակտը հայցվորը չի բողոքարկել:

4.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում, Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքը մասնակիորեն հիմնավոր է և ենթակա է բավարարման մասնակիորեն, հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է, որ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Դատարանը պետք է գործի բոլոր հանգամանքները քննարկի համակցության մեջ, ապացույցները ստուգի մեկը մյուսի հետ համեմատելով և դրանց միջև հակասություններ նկատելու դեպքում՝ պարզի այդ հակասությունների էությունը, գործի համար կարևորությունը՝ օրինական և հիմնավորված վճիռ կայացնելու համար, ինչը սույն գործով Դատարանի կողմից չի կատարվել:

Դատարանը հիմնավոր համարելով ստորադաս դատարանի պատճառաբանություններն այն մասին, որ գործում առկա առուվաճառքի պայմանագրերը և հանձնման-ընդունման ակտերը ժամկետային առումով ոչ պատշաճ ձևակերպված լինելու հանգամանքը չի բացառում վեճի առարկա գույքն առուվաճառքի պայմանագրերի ուժով հայցվորի կողմից ձեռք բերված լինելու փաստը, միաժամանակ պատճառաբանել է, որ հայցվորի կողմից վիճելի գույքի ձեռք բերումը կատարվել է օրինական հիմքով՝ առուվաճառքի պայմանագրերով, իսկ պատասխանող կողմի այն փաստարկը, թե փորձագետի եզրակացության համաձայն այդ պայմանագրերը ժամանակագրական առումով կազմվել են ավելի ուշ, քան նշված է պայմանագրերում՝ որոշիչ չեն կարող լինել...

Ըստ գործի նյութերի՝ վիճելի գույքը ձեռք է բերվել Լ.Սարգսյանի կողմից Ընկերության գործադիր տնօրենի լիազորությունների իրականացման ժամանակաշրջանում: Հաստատված է նաև, որ վիճելի գույքը պահվում է Ընկերության պահեստում: Մինչդեռ Դատարանը

պատշաճ քննարկման և գնահատման առարկա չի դարձրել հայցվորի՝ վիճելի գույքի սեփականատեր հանդիսանալու հարցը, չի պարզել, թե ինչ միջոցներով և նպատակով /Ընկերության, թե անձնական/ է հայցվորը ձեռք բերել վիճելի գույքը, որը մինչև օրս գտնվում է Ընկերության պահեստում:

Գերագույն դատարանը գտնում է, որ Դատարանի կողմից թույլ տված դատավարական օրենքի խախտումներն էական են, թույլ են տրվել դատական քննության ժամանակ, և անվերապահորեն ազդել են գործով ըստ էության ճիշտ դատական ակտ կայացնելու վրա:

Գերագույն դատարանը միաժամանակ փաստում է, որ սույն գործով Դատարանը պատշաճ չի քննել, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործով առկա բոլոր ապացույցները, ինչը հնարավորություն չի տալիս Գերագույն դատարանին փոփոխել ստորադաս դատարանի դատական ակտը:

Այսպիսով Գերագույն դատարանը վերը նշված հիմքերի առկայությունը բավարար է համարում՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ կետի ուժով Դատարանի վճիռը բեկանելու և գործը ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան նոր քննության ուղարկելու համար՝ գործով առկա բոլոր ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննելու և գնահատելու համար:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ կետով, 256-րդ հոդվածով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Պատասխանողի ներկայացուցիչ Արմեն Թարխանյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2011թ. մարտի 21-ի վճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2011թ. մարտի 21-ի որոշումը և գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

**Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
Կ.ՂԱՐՍՅԱՆ**